05.01.2025
Պայմանագրի համար՝ 25.1.1

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Կողմերը

1.1 Սույն փաստաթուղթը հանդիսանում է առաջարկ-պայմանագիր (այսուհետ՝ «Պայմանագիր»), որով կարգավորվում է դասընթացների վարման ծառայությունը (այսուհետ՝ «Դասընթաց») LIGHT.am կայքի սեփականատեր հանդիսացող «ԲԻԶԱՐ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Կատարող») մի կողմից և կայքից օգտվող, կայքում գրանցվող ցանկացած անձի՝ այդ թվում ֆիզիկական կամ իրավաբանական (այսուհետ՝ «Մասնակից») մյուս կողմից, միասին՝ կողմեր:

1.2 Կատարողն իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու պայմանագրի տվյալները ցանկացած ժամանակ՝ առանց նախնական ծանուցման: Մասնակիցը պարտավորվում է պարբերաբար ստուգել փոփոխությունները պաշտոնական կայքէջում (LSD.am, LIGHT.am)

1.3 Պայմանագրի հիմնական տարբերակ է համարվում մասնակցի կողմից ծառայության վճարման պահին կայքում առկա պայմանագիրը, որի մեջ նշված է վերջին փոփոխության ամսաթիվը և պայմանագրի հերթական համարը:

1.4 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում առանց կողմերի ստորագրության այն պահից, երբ մասնակիցը կատարում է գրանցման հաստատում տվյալ դասընթացի կայքէջում և ստանում է լրացուցիչ գրանցման հաստատում (Տես կետ **3.4**):

2. Պայմանագրի առարկա

2.1 Կատարողը պարտավորվում է տրամադրել ուսուցողական ծառայություններ, իսկ մասնակիցը պարտավորվում է վճարել դրանց համար, բացառությամբ այն դեպքերի երբ դասընթացն ԱՆՎՃԱՐ է

2.2 ԱՆՎՃԱՐ դասընթացները սահմանափակ են, առկա են միայն հատուկ ակցիաների շրջանակում և կոնկրետ դասընթացների համար:

2.3 Դասընթացների ծավալը, ձևը և ժամկետները նշված են կատարողի կողմից տրամադրվող համապատասխան ուսուցողական ծրագրերում կամ դասընթացի համապատասխան էջում կայքի մեջ: Դասընթացի ձևի և ժամկետների մեջ կարող են կատարվել փոփոխություններ՝ գրանցված մասնակիցների հետ նախնական բանավոր համաձայնությամբ

3. Գրանցման կարգը

3.1 Գրանցումը դասընթացին կատարվում է դասընթացի համապատասխան կայքէջում: Հասանելի դասընթացներին մասնակցելու համար պետք է սեղմել ԳՐԱՆՑՎԵԼ կոճակը և հաստատում անցնել բացված պատուհանում: Այն դասընթացների համար, որոնց տևողությունը մեկ օրից ավել է՝ գրանցման պատուհանում ցուցադրվում է միայն առաջին օրը, իսկ մանրամասն տեղեկատվությունը առկա է բացված պատուհանում:

3.2 Բոլոր դասընթացների համար տեղերը սահմանափակ են: ԳՐԱՆՑՎԵԼ կոճակը ակտիվ կլինի ազատ տեղերի առկայության դեպքում:

3.3 Կայքում միշտ ցուցադրվում է ազատ տեղերի քանակը: Մեկ մասնակիցը կարող է գրանցվել իր նախընտրած դասընթացին միայն մեկ անգամ:

3.4 Կայքում գրանցվելու հայտ տալուց հետո ձեր հետ կապ կհաստատվի և կամրագրվի ձեր վերջնական գրանցումը:

3.5 Եթե ազատ տեղերը վերջացել են, բայց դուք ուզում եք մասնակցել դասընթացին կարող եք դասընթացի էջում նամակ թողնել մեզ, եթե այլ մասնակից չհաստատի իր գրանցումը՝ մենք կապ կհաստատենք ձեր հետ:

3.6 Որոշ հանգամանքների բերումով դասընթացների օրերը կարող են փոփոխվել, հետաձգվել կամ երկարել տևողությամբ: Նման դեպքերում մասնակիցները կտեղեկացվեն կայքում լրացված էլեկտրոնային փոստի և/կամ հեռախոսահամարի միջոցով:

3.7 Նույն ընկերությունում կամ հիմնարկում աշխատող 4-ից ավել մասնակիցները, ովքեր ցանկանում են մասնակցել միևնույն դասընթացին: կարող են դիմել խմբային գրանցման համար ընդհանուր դասընթացների էջում՝ հետադարձ կապի միջոցով: Նման դեպքում հնարավոր են լրացուցիչ զեղչեր (Տես կետ **6.6**):

4. Լրացուցիչ ծառայություններ և վճարներ

4.1 Վճարման պատուհանում կարող է լինել արժեքի վճարման մի քանի տարբերակ, եթե դասընթացները նախատեսում են հավելյալ ծառայություններ (ավել դասաժամ, լրացուցիչ պրակտիկա և այլն)

4.2 Վճար սննդի կազակերպման համար: Մենք չենք հանդիսանում սննդի մատակարար: Այդ վճարը նախատեսվում է երկար դասընթացով օրերին սնունդ պատվիրելու համար: Սննդի համար վճարը դասընթացի վճարի մաս չի կազմում և վճարվում է առանձին սննդի մատակարար կազմակերպությանը:

5. Վճարման պայմաններ

5.1 Դասընթացների համար վճարումը կատարվում է դասընթացը սկսելուց առաջ: Կայքում վճարման համակարգի բացակայության դեպքում՝ վճարումը գանձվում է առձերն՝ դասընթացի վայրում, բացառությամբ այն դեպքերի երբ դասընթացն ԱՆՎՃԱՐ է

5.2 Մասնակիցը պարտավորվում է կատարել վճարում, եթե գրանցվել և հաստատել է իր մասնակցությունը, նույնսիկ այն դեպքում, եթե չի ներկայացել դասընթացին:

6. Զեղչեր

6.1 Վաղաժամ գրանցում: Մասնակիցները, ովքեր գրանցվում են դասընթացի մեկնարկից 2 շաբաթ առաջ, ստանում են 10% զեղչ: Այդ զեղչը գործում է միայն կայքում "EARLYBIRD" կոդն ակտիվացնելու դեպքում: Եթե գրանցումը կատարվել է 2 շաբաթ առաջ, բայց կոդը չի ակտիվացվել՝ դասընթացի զեղջը չի գործելու

6.2 Զեղչեր ուսանողներին և համերգասրահների աշխատակիցներին: Հատուկ զեղչերից օգտվելու համար կայքի համապատասխան բաժնում կարող եք մուտք անել ձեր կարգավիճակը հաստատող փաստաթուղթ: Նույնականացումը հաստատելուց հետո դուք կստանաք 15% զեղչի կտրոն-կոդ:

6.3 Կորպորատիվ հաճախորդների համար առաջարկվում են հատուկ պայմաններ, որոնք կարող են ներառել զեղչեր և ճկուն վճարային պայմաններ՝ կախված պայմանագրի ընդհանուր արժեքից և դասընթացի տեսակից: Կորպորատիվ զեղչերի համար պետք է գրել մեզ առանձին նամակով:

6.4 Դասընթացների բոլոր մասնակիցները դասընթացի ավարտից հետո կստանան անվանական միանգամյա զեղչի կտրոն-կոդ, որը կարող են օգտագործել այլ դասընթացին մասնակցելու համար:

6.5 Մեկ դասընթացի համար կարող է օգտագործվել միայն մեկ տեսակի զեղչի կտրոն: Զեղչի կտրոնները չեն համադրվում: Զեղչերը տարածվում են նաև լրացուցիչ ծառայությունների վրա, եթե դրանք առկա են տվյալ դասընթացի շրջանակում: Զեղչերը չեն գործում սննդի համար հավաքագրած վճարի համար:

6.6 Զեղչեր կարող են տրամադրվել նաև նույն ընկերությունում կամ հիմնարկում աշխատող 4-ից ավել մասնակիցների համար, ովքեր կմասնակցեն նույն դասընթացին: Նման դիմում հնարավոր է ներկայացնել ընդհանուր դասընթացների էջում հետադարձ կապի միջոցով: Զեղչի չափը դիտարկվում է ամեն առանձին դեպքի համար անհատական:

7. Վերադարձի Քաղաքականություն

7.1 Դասընթացի չեղարկում: Եթե դասընթացը չեղարկվում է մեր կողմից, դուք կստանաք ամբողջական վերադարձ:

7.2 Մասնակիցների չեղարկում: Եթե դուք չեք կարող մասնակցել դասընթացին, խնդրում ենք տեղեկացնել մեզ առնվազն 2 օր առաջ՝ վերադարձ ստանալու համար: Վերջին պահին չեղարկումների դեպքում վերադարձ չի տրամադրվում:

7.3 Դասընթացի արդյունավետություն: Մենք բարձր գնահատում ենք ձեր մասնակցությունը և նպատակ ունենք ապահովելու, որ մեր դասընթացները բավարարեն ձեր ակնկալիքները: Եթե դասընթացը ձեր կողմից չի համարվել արդյունավետ, դուք կարող եք դիմել վերադարձի համար հետևյալ պայմաններով՝

- **Գրավոր բացատրություն վերադարձի հիմնավորմամբ**
  ...որտեղ պետք է տրամադրեք պարզ և մանրամասն բացատրություն, թե ինչու եք համարում, որ դասընթացը չէր բավարարում ձեր ակնկալիքներին:
- **Դիմումի ժամկետ - 7 օր**
  ...դասընթացի ավարտից հետո ունեք 7 օր ժամանակ՝ գրավոր բացատրությամբ դիմելու համար:
- **Դիմումի վերանայում**
  ... Ձեր դիմումը կվերանայվի մեր կողմից, և մենք կապ կհաստատենք ձեզ հետ 14 աշխատանքային օրվա ընթացքում:
- **Վերադարձի վճարում**
  ... Եթե ձեր դիմումը հաստատվի, դուք կստանաք ամբողջական կամ մասնակի վերադարձ, կախված դեպքից: